ԷՋԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ե. Հ. ՏՈԼԲԱԳՅԱՆ

Վերջին հարյուր տարվա ընթացքում կատարված հնագիտական հայտնաբերումները Առաջավոր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում համաշխարհային պատմության թատերաբեմ հանեցին մի շարք հնագույն հասարակությունների անունները, որոնց թվում հեթերին, խուրրի-միտանիներին, հայասա-ազզեցիներին և ուրիշների։

Տեղաբնիկ հեթերը (կամ խեթերը) և մ. թ. ա. շուրջ 2000 թ. նրանց նվաճող հնդեվրոպացի նեսիտները հիմնեցին Առաջավոր Ասիայի հզորագույն պետություններից մեկը, որը հիմնականում ընդգրկում էր Մեծ Հայքի արևմտյան շրջանները և Փոքր Հայքի հարավ-արևմտյան ու արևելյան մասերը։ Հեթական պետության անմիջական հարևան և ժամանակակից էին Խուրրի-Միտանին, որն ընկած էր Հայկական լեռնաշխարհի հարավային մասում և Հյուսիսային Միջագետքում (Վաշուկանի մայրաքաղաքով) և Փոքր Հայքի հյուսիս-արևմտյան հատվածում ու Բարձր Հայքի արևմտյան գավառներում գտնվող Հայասա-Ազզին (Կումախա մայրաքաղաքով)։

Նվաճող հնդեվրոպացի նեսիտները հանդես բերեցին նախաձեռնող և կազմակերպչական տաղանդ, միացրին ցաք ու ցրիվ տեղաբնիկ խաթական[1] առանձին իշխանապետությունները և կազմակերպեցին իր ժամանակի Առաջավոր Ասիայի հզորագույն պետություններից մեկը։ Նվաճողները հնդեվրոպականացրին տեղաբնիկների խատտիլի լեզուն։ Տիրող հնդեվրոպական վերնախավը դարերի ընթացքում արենախառնվեց տեղացի աղնվականության հետ և ստացավ նոր տիպ ու երանգ։

Հեթական պետությունը մինչև մ. թ. ա. XII դարը ղեկավարել են 19 վեհապետներ։ Այս մեծ պետությունը հաջողությամբ կարողացավ պահպանել իր դիրքը այդ դարաշրջանի հզոր պետությունների (Եգիպտոս, Խուրրի-Միտանի, Բաբելոն) միջև ամբողջ հինգ դար, որոնց ընթացքում պետության սահմանները արևմուտքում հասել էին մինչև Էգեյան ծովի ափերը, իսկ հարավում ու հարավ-արևելքում՝ մինչև արաբական անապատի սահմանագիծը։

Զգտելով իրեն ենթարկել ողջ Հայկական բարձրավանդակը, հեթերի ամենանշանավոր արքան՝ Շուպպիլուլիուման (1395—1350) բուռն ու հետևողական պայքար ծավալեց այդ ուղղությամբ Հայկական լեռնաշխարհի երկու մյուս պետությունների՝ Խուրրի-Միտանիի և Հայասա-Ազզիի դեմ, անշուշտ, չանտեսելով առավել մանր իշխանապետությունները։ Մերթ զենքի ուժով և մերթ դիվանագիտական ճանապարհով նա կարողացավ իրեն ենթարկել այդ պետությունները։

---

1 *Պատմարանները պրոտո-հեթեր կամ նախահեթեր են անվանում խաթերին կամ խատտիներին՝ հնդեվրոպացի նեսիտներից նրանց տարբերելու համար (Տե՛ս* Dr. G. Contenau, La civilisation des Hittites et des Hurrites du Mitanni, Paris, 1948, *էջ 108/24)։*

Իր հզորության գագաթնակետին հասած Հեթական պետությունը Շուպպիլուլիումայի և նրա որդի Մուրշիլ II-ի (1347—1320) ժամանակ ընդգրկում էր ողջ Փոքր Ասիան, Հայկական լեռնաշխարհի մի խոշոր մասը՝ մինչև Վանա լճի արևմուտքը, դեպի հարավ տարածվելով մինչև Կորդվաց աշխարհը, Հյուսիսային Սիրիան և Միջագետքի հյուսիս-արևմտյան մասը։ Հեթաստանը տիրել էր Կարքեմիշին ու Քադեշին, Եփրատի ու Որոնդեսի արգավանդ գետահովիտներին՝ մինչև Լիբանանի լեռնագոտիները և փորձում էր իր շոշափուկները տարածել ընդհուպ մինչև Բաբելոն, բացահայտորեն միջամտելով այդ երկրի ներքին գործերին[2]։

Այդ ժամանակաշրջանում հեթական արվեստն ու միտքը ծաղկում էին բովանդակ Առաջավոր Ասիայում, տարածվելով էգեյանի շուրջը և Մինոսյան Կրետեի վրա։ Հեթական պաշտամունքի ծեսերն ընդունել էին տրոյական իշխանները։ Միկենյան թագավորներն իրենց պալատների կիկլոպյան դռները զարդարում էին հեթական մոնումենտալ արվեստի արդյունք հանդիսացող հսկայատիպ առյուծներով։ Միկենյան արվեստագետները ընդօրինակում էին հեթական խեցեղենի զարդանախշերը։ Հեթական դիցաբանությունը իր արտացոլումն ունեցավ հելլենական դիցաբանության մեջ, որոշակի ազդեցություն թողնելով հունա-հռոմեական աշխարհի վրա[3]։ Հունաստանն իր աշխարհագրական դիրքով կապված էր Փոքր Ասիայի հետ, իսկ Փոքր Ասիան արևելյան հասարակությունների նախադուռն էր։ Այս հանգամանքներն էլ որոշեցին արևելյան տեխնիկայի, արհեստների, առևտրի և մշակույթի ազդեցությունը։ Եվ որովհետև Հունաստանը պատմության բեմ դուրս եկավ ավելի ուշ, քան Արևելքի երկրները, որտեղ արդեն գոյություն ուներ բավականին զարգացած հասարակություն, ապա դա չէր կարող չափազանց մեծ նշանակություն և հետևանք չունենալ։ Արևելքի ազդեցությունը արագացրեց Հունաստանի զարգացումը։ Դա արտահայտվում է ոչ միայն նրանով, որ արևելյան շուկաների հետ ունեցած հարաբերությունները խթանում էին հունական առևտուրը, այլև նրանով, որ հույները կարող էին օգտվել արևելյան կուլտուրայի նվաճումներից[4]։

Պարսկական ժամանակաշրջանի «Արքայական ճանապարհի» ամբողջ երկարությամբ հեթերը թողել են անջնջելի հետքեր՝ իրենց արվեստի հուշարձանները, որոնք ցրված են Հյուսիսային Սիրիայում (Համա, Ջարաբլուս կամ Կարքեմիշ, Սակչե-Կյոզի, Թել-Ահմար, Զենջիրլի), Կապադովկիայի հյուսիսում ու հարավում (Բոր, Ֆրակտին, Իվրիզ, Մալաթիա, Ալիշար, Բողազքյոյ, Եազըլը-Քայա, Հյոյուկ, Քյուլ-թեփե), Փոյուգիայում (Էֆլաթոն-Բունար, Գյավուր-Քալեսի, Կարադաշ), Փոքր Ասիայի արևմուտքում (Սիպիլ, Կարաբել)։

Հեթական կայսրության մայրաքաղաքը՝ Խատուշաշը և մյուս նշանավոր քաղաքները (Քյուլ-թեփե, Կարքեմիշ) ունեցել են հեթական ինքնուրույն ոճով հոյակապ ու շքեղ ապարանքներ, պալատներ ու տաճարներ, դիվանատներ ու մատենադարաններ։ Հնագետները վկայում են, որ նախահեթական ու հեթական ճարտարապետությունը դարերի ընթացքում մուտք է գործել նաև Խուրրի-

---

[3] Տե՛ս Garstang, The Hittites, Vestiges of a Vanished empire, Wunders of the Past, IV, էջ 838—870։

[3] Տե՛ս F. Cumont, Les Religions Orientales dans le Paganisme romain, P., 1929: Asianic Influence in Greck mythology: Studies in the History of Religions presented to Crawford Howell Toy. N. Y. (Macmillan), 1912, էջ 243։

[4] Ս. Խ. Կովալյով, Հունաստան, Երևան, 1937, էջ 101։

Միտանի, Հայասա-Ազզի և անգամ Ասորեստան, որի ռազմատենչ արքաները իրենց արձանագրություններում հիշատակում են, որ երկրի մայրաքաղաք Ասսուրը զարդարել են հեթական ճարտարապետական ոճի բազմաթիվ պալատներով ու տաճարներով։

Համամարդկային քաղաքակրթության ընդհանուր գանձարանին հեթական մշակույթի բերած այս ավանդը և՛ հեթերի, և՛ միտանացիների համար հին աշխարհի քաղաքակրթության մեջ ապահովում է մշտական տեղ։ Եվ եթե «պատմության մեջ մի ժամանակ խոսվում էր միայն Եգիպտոսի, Բաբելոնի և Ասորեստանի դերի մասին, ապա ներկայումս բոլոր հիմքերը կան այս պրոգրեսը վերագրել նաև հեթերին ու միտանացիներին»[5]։

* * *

Առաջավոր Ասիայի մեջ հետաքրքրող ժամանակաշրջանի պատմությունը վերևում նշված այդ չորս հզոր պետությունների միջազգային քաղաքական-դիվանագիտական հարաբերությունների, նրանց միջև հետզհետե սրվող հակասությունների, ներքին սոցիալ-տնտեսական տեղաշարժերի բուռն բախման և զինված պայքարի տարբեր փուլերի միահյուսումն էր, անզիջում ու անողոք պայքար Ասորիքին և առևտրական ուղիներին տիրելու համար։

Վաղուց անցել էին այն ժամանակները, երբ Եփրատի, Տիգրիսի և Նեղոսի գետահովիտների այս պետություններն ինքնաբավ էին։ Հնագույն շրջանի մշակույթն արդեն դուրս էր եկել գետահովիտների սահմաններից ու դարձել ծովային, որը այդ ժամանակի համար ասել է համաշխարհային։ Դեպի բաց ծով, դեպի մետաղառատ երկիր ու մեծ շահաստաններ ձգտելը, առևտրական ուղիներին ու երկրներին տիրելը ժամանակի պետությունների դիվանագիտության նպատակն էր։

Բաբելոնն, օրինակ, սուր կարիքն ուներ Եգիպտոսի ոսկու, Սիրիայի գեղարվեստական արտադրանքների և Կիլիկիայի ու Կապադովկիայի մետաղահանքերի ու մետաղի արհեստագործության։

Խուրրի-Միտանի պետությունը, իբրև միջերկրյա ցամաքային պետություն, ձգտում էր դեպի Միջերկրականի ափերը՝ թե՛ երկրի մետաղային հարուստ արտադրությունները մեծ շահաստաններ հասցնելու և թե՛ այդտեղից արհեստագործական իրեր ներմուծելու համար։

Բաբելոնը, Եգիպտոսը, Կիլիկիան, Կապադովկիան և Ասսուրը միացնող առևտրական ուղիները մեծ մասամբ անցնում ու իրար էին խաչաձևվում Խուրրի-Միտանի ընդարձակ պետության տերիտորիայում։ Այս հանգամանքը նրան դարձնում էր հարևան պետությունների նվաճողական ձգտումների առարկան։ Ամեն գնով ձգտելով պահպանել իր երկրով անցնող առևտրական ուղիները, Խուրրի-Միտանին վաղուց տիրացել էր նաև Հյուսիսային Սիրիային, և հենց դրա համար էլ դեմ-հանդիման եկավ Եգիպտոսի հետ, որը վճռել էր Սիրիան խլել Միտանիից։ Ավելի քան մի դար է տևում այդ արյունալի պայքարը Եգիպտոսի և Խուրրի-Միտանի պետության միջև։ Եվ վերջապես XVIII դինաստիայի փարավոն Թութմոս IV-ը (1420—1401) խոհեմություն է ունենում բարեկամանալ Խուրրի-Միտանիի հետ, որովհետև հյուսիս-արևմուտքում ուրվա-

[5] G. Contenau, նշվ. աշխ., էջ 190։

գծվում է հեթական, իսկ հարավ-արևելքից՝ հետզհետե հզորացող ասորեստանյան սպառնալիքը։

Հեթաստանի համար էլ Սիրիան հրապուրիչ էր ոչ միայն իբրև լավ պատառ իր նոր բացված նվաճողական ախորժակի, այլև իր հանքային հարուստ արտադրություններն ու արհեստագործական արտադրանքները դեպի առևտրական մեծ շահաստանները՝ Եգիպտոս, Կիպրոս և մինչև իսկ Կրետե վաճառահանելու և ծովեզրյա մեծ կենտրոններից իրեն անհրաժեշտը ներմուծելու համար[6]։

Այսպիսով, Սիրիան այն վայրն էր, որտեղ միմյանց էին բախվում ժամանակի հզորների շահերը։ Այստեղ էր գտնվում այդ ժամանակների պատմությունը հասկանալու բանալին։ Հեթաստանն էլ ձգտում էր դեպի Սիրիա, որովհետև իր առևտրի ու տնտեսության զարգացման հնարավորությունը գտնում էր միայն Սիրիային և այնտեղից անցնող առևտրական ուղիներին տիրելու մեջ, որի համար էլ նա Միտանիից խլել էր Հյուսիսային Սիրիայի Կարքեմիշ քաղաքը և այն դարձրել կայսրության երկրորդ մայրաքաղաքը։ Որպեսզի կայսրությունը ապրեր ու գոյատևեր՝ հեթերի համար կենաց և մահու հարց էր պահել Խատտուշաշ-Կարքեմիշ ուղին, կայսրության շնչերակը։ Այստեղից էլ՝ բուռն հակամարտությունը Հեթաստանի և Խուրրի-Միտանիի միջև։

Հեթաստանը հակասության մեջ էր նաև Հայասա-Ազզիի հետ, որովհետև Հայասա-Ազզի դաշնակցային պետությունը նախ՝ իր ձեռքում էր պահում Միջին Ասիայից Սև և Էգեյան ծով տանող առևտրական կարևոր ուղիներից մեկը, որը դուրս գալով Խորասանի Հերաթ քաղաքից, անցնում էր Մեշեդ—Թեհրան—Ղազվին—Միանե—Թավրիզ գծով և իջնում Արաքսի հովիտը։ Այնուհետև ճանապարհը Հեր, Նախճավան, Ջարեհավան, Կարին և Տրապիզոն քաղաքների վրայով հասնում էր Սև ծովի ափը։ Այս ճանապարհի մի ճյուղը թեքվելով հարավ՝ հասնում էր Սեբաստիա և Հալիս գետի հովտով ու Անտիտավրոսի փեշերով մտնում Կապադովկիա։

Հայասա-Ազզի դաշնակցային պետությունը ոչ միայն խոչընդոտում էր դեպի Սև ծովի ափերը տարածվելու հեթերի ձգտումին, այլև շատ հաճախ հարևան ավարառու և ռազմատենչ ցեղերի հետ զինակցած ասպատակում, ավերում ու հրկիզում էր Հեթական պետության քաղաքները, տանելով բազմաթիվ ռազմավար ու գերիներ։

Հեթական թագավորները Սիրիան նվաճելու իրենց ծրագրերի հաջող իրականացման համար անհրաժեշտ էին համարում իրենց թիկունքն ապահովել Հայասա-Ազզիի և Խուրրի-Միտանիի հավանական հարձակումներից։

Հեթական արքաները շատ լավ էին ըմբռնել այն իրողությունը, որ ոչ մի պետություն ապահով ու անվրդով չէր կարող տիրել Միջագետքին, Պարսից ծոցի շրջակայքին, Ասորիքին ու Փոքր Ասիային՝ առանց նախապես ամրանալու Հայկական բարձրավանդակում։ Հեթերի նշանավոր արքա Շուպպիլուլիումային և նրա որդուն՝ Մուրշիլ II-ին հաջողվեց տիրել Սիրիային, սակայն այս անգամ հակամարտությունը սրվեց Եգիպտոսի և Հեթական կայսրության միջև։ Այդ հակամարտությունն ու մրցակցությունը հանգեցրեցին 1294 թ. Քադեշի ճակատամարտին, որը տեղի ունեցավ XIX դինաստիայի եգիպտա-

6 Տե՛ս Ե. Տոլպագյան, Պատմություն Սուրիո և Լիբանանի, Բեյրութ, 1940, էջ 9։

կան նշանավոր փարավոն Ռամզես II-ի (1298—1232) և հեթական թագավոր Մուվատալլուի (1320—1292) միջև։

Ճակատամարտի ելքը ցույց տվեց, որ երկու կողմերն էլ ի վիճակի չեն վճռական հաղթանակ ձեռք բերել միմյանց նկատմամբ։ Պատերազմական գործողությունները, թեև ընդմիջումներով, տևեցին 16 տարի և հավասար չափով հյուծեցին ու արյունաքամ արեցին երկու հզոր մրցակիցներին էլ։ Ընդհանուր թուլությունը և լիակատար հաղթանակի հասնելու անհուսալիությունը երկու հակառակորդներին ստիպեցին բանակցությունների դիմել, մանավանդ, որ երկու պետությունների համար էլ արդեն ուրվագծվում էր հետզհետե հզորացող Ասորեստանի սպառնալիքը, որը դամոկլյան սրի նման կախվել էր և՛ Եգիպտոսի, և՛ Հեթաստանի վրա։ Դիմելով փոխադարձ զիջումների, Ռամզես II-ը և Խատտուշիլ III-ը մ. թ. ա. 1278 թ. կնքեցին խաղաղության, բարեկամության և փոխադարձ օգնության պայմանագիր։

Այս դաշնագիրը միջազգային առաջին ու հնագույն պայմանագրությունն է։ Չնայած որ դրանից առաջ էլ Շուպպիլուլիուման պայմանագրեր էր կնքել Փոքր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի փոքրիկ թագավորությունների կամ իշխանապետությունների հետ, սակայն դրանք պայմանագրեր էին հեթական կայսրության կա՛մ վասալների, կա՛մ էլ նրա անմիջական ազդեցության ոլորտի մեջ գտնվող իշխանությունների հետ։ Մինչդեռ հեթա-եգիպտական դաշնագիրը երկու հավասարազոր պետությունների միջև կնքված դաշինքն էր մի երրորդ երկրի նվաճման համար մղված պատերազմից հետո, պատերազմ, որ Վ. Ի. Լենինի բնորոշումով իմպերիալիստական էր. Լենինը գրում է. «Իմպերիալիստական պատերազմներ եղել են նաև ստրկության հողի վրա»[7]։

Ահա թե ինչն է հեթա-եգիպտական պայմանագրին տալիս միջազգային բնույթ և իր տեսակի մեջ դարձնում այն արդարև ոռագույնը: Սակայն, չնայած իր հնությանը, նա իր բնույթով ու հիմունքներով հիշեցնում է արդի ժամանակների միջպետական դաշնագրությունները և դրա համար էլ ունի համաշխարհային-պատմական նշանակություն։

Ռամզես II-ի և Խատտուշիլ III-ի միջև կնքված դաշինքը երկու կողմերի վրա էլ դնում է մի շարք համանման պարտավորություններ, մինչդեռ հեթական արքաների կնքած նախորդ պայմանագրերը միակողմանի էին։ Օրինակ, Շուպպիլուլիումայի կնքած տարբեր պայմանագրերում Հեթաստանից կախվածության մեջ գտնվող վասալ պետությունը հեթական մեծ արքային հավատարմության երդում էր տալիս, հանձն էր առնում զինվորական և ռազմական աջակցություն ցույց տալ Հեթաստանին, երբ նա կռվում էր արտաքին թշնամիների դեմ և երբ հարկ էր լինում ընկճել ներքին ապստամբությունները, հանձնել փախստականներին, կանոնավոր կերպով հարկ վճարել և ամեն տարի իր սյուզերենին նորից տալ մեծարանքի, հպատակության և հավատարմության երդում[8]։

Պայմանագիրը կնքելուց առաջ հեթական թագավորի նախաձեռնությամբ տեղի են ունենում երկարատև նախնական բանակցություններ։ Խատտուշիլը

---

[7] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, հրատ. 3, էջ 305։

[8] Տե՛ս B. Hrozny, Histoire de l'Asie Antérieure de l'Inde et la Crète, Paris, 1947, էջ 200։ Նաև՝ Ա. Խաչատրյան, Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, էջ 479—480, 505։

Ռամզես II-ին ուղարկում է արծաթյա տախտակի վրա փորագրված պայմանագրի նախագիծը։ Որպես փաստաթղթի վավերականության հավաստիք՝ տախտակի առաջին երեսի վրա նկարված էր թագավորը՝ հողմերի և կայծակի աստված Թեշուբի կողքին, իսկ հակառակ երեսի վրա թագուհին՝ արևի աստվածուհի Արինայի հետ։ Ռամզեսը ընդունում է հեթերի թագավորի պայմանները և ի նշան իր համաձայնության խատտուշիլին է ուղարկում մի այլ արծաթյա տախտակ, որի վրա փորագրված էր հաշտության պայմանագրի տեքստը։ Երկու տեքստերն էլ վավերացված էին պետական կնիքներով և ստորագրություններով։ Պայմանագիրը, բաբելական և եգիպտական լեզուներով, հասել է երեք օրինակներով, որոնցից երկուսը եգիպտական հիերոգլիֆներով փորագրված են Ռամզեսսեումի ու Կառնակի կոթողների վրա, իսկ երրորդը, խմբագրված բաբելական լեզվով, գտնվելիս է եղել Խատտուշաշի արքունիքում։

Հեթա-եգիպտական հաշտության պայմանագրի համաձայն Սիրիան բաժանվեց երկու պետությունների միջև։ Հյուսիսային Սիրիային տեր դարձան հեթերը, իսկ հարավային Սիրիան ու Պաղեստինը մնացին եգիպտական տիրապետության տակ՝ որպես Եգիպտոսի ասիական կալվածքները։

Մոտավորապես 33 դարերի հնություն ունեցող այդ պայմանագրի ներածության մեջ բերվում են դաշնագիր կողմերի բոլոր տիտղոսները։ Դաշինքը, որը բաղկացած է 18 հատվածներից, սկսվում է այն հավաստումով, որ հեթերն ու եգիպտացիները փոխադարձաբար հանձն են առնում իրենց բոլոր վեճերը լուծել խաղաղորեն, առանց ուժի և բռնության։ Այնուհետև ասվում է, որ դարերից ի վեր հեթերն ու եգիպտացիները թշնամիներ չեն եղել, աստվածները երբեք չեն թույլատրել թշնամություն երկու երկրների միջև և Ռամզեսն էլ երբեք թշնամի պիտի չդառնա Խատտիին։ Նրանց հարաբերությունները փչացել են միայն Խատտուշիլի եղբոր՝ Մուվատալլուի թագավորության ժամանակ, որը կռվել է Ռամզեսի՝ Եգիպտոսի մեծ թագավորի հետ։ Սույն «Հիանալի պայմանագրի» կնքման օրից երկու թագավորների միջև հաստատվում է խաղաղություն, բարեկամություն և եղբայրություն։ «Այն բանից հետո, երբ ես հեթերի թագավոր դարձա, ես Եգիպտոսի մեծ թագավոր Ռամզեսի և նա էլ ինձ հետ՝ կապրենք խաղաղությամբ և եղբայրությամբ։ Դա կլինի ամենալավ խաղաղությունն ու եղբայրությունը, որ երբևիցե գոյություն է ունեցել երկրի վրա։ Թող լինի հիանալի խաղաղություն և եղբայրություն հեթերի մեծ թագավորի և Ռամզեսի՝ Եգիպտոսի մեծ թագավորի որդիների միջև, և Եգիպտոսն ու հեթերի երկիրը մեզ նման թող առհավետ ապրեն հաշտ ու եղբայրաբար»[9]։

Դաշնագիրը ճշտում է երկու երկրների սահմանները։ Պայմանավորվող բարձր կողմերը հրաժարվում էին հետագայում մեկը մյուսի հաշվին նվաճողական որևէ ձեռնարկումից։ Պայմանագրում կա հարձակողական և պաշտպանողական տրամադրություն ընդդեմ ամեն տեսակի հնարավոր թշնամու։ Պայմանագիրը փոխադարձ օգնություն է նախատեսում ոչ միայն արտաքին, այլև ներքին թշնամիների դեմ։ Դաշնակիցները իրար օգնություն էին երաշխավորում իրենց ենթակա տիրույթներում խռովությունների և ապստամբությունների դեպքում, գլխավորապես նկատի առնելով ասիական մարզերը, որտեղ չէին դադարում պատերազմները, ապստամբությունները, ավազակային հարձակումները և կողոպուտները։ Նախատեսվում էր օգնել միմյանց քաղաքա-

[9] Տե՛ս История дипломатии", т. I, М., 1959, էջ 15։

կան հանցավորներին հանձնելու և իրենց երկրի սահմաններից արտաքսելու, քաղաքական վտարանդիներին ու փախստականներին մերժվում էր քաղաքական ապաստարանի իրավունքը, սակայն նշվում էր, որ նրանց չպետք է պատժել իրենց երկիրը վերադարձվելուց հետո։

«Հրաշալի պայմանագրի» կնքումից հետո կատարվեց դիվանագիտական նամակների և դեսպանների փոխանակում։ Նամակներ էին փոխանակում ոչ միայն թագավորները, այլև թագուհիները, որոնք իրենց ուրախությունն էին արտահայտում «Հրաշալի պայմանագրի» առթիվ, որը խաղաղություն էր հաստատում երկու հզոր տիրակալների միջև։

Խատտուշիլ III-ի և Ռամզես II-ի միջև կնքված այս պայմանագիրը մեծ նշանակություն ունի դիվանագիտության պատմության համար։ Միջազգային իրավունքի այդօրինակ մեզ հայտնի հիշատակարանների մեջ այն հնագույնն է, որտեղ իր արտացոլումն են գտել Հին Արևելքի երկրների պետական կարգերի բոլոր հիմնական բնորոշ գծերը։

Հաշտության պայմանագրի վավերացումից 13 տարի հետո Եգիպտոսի և Հեթաստանի հարաբերություններն է՛լ ավելի սերտացան մ. թ. ա. 1266 թ. դինաստիական ամուսնությամբ. Ռամզես II-ը ամուսնացավ Խատտուշիլ III-ի դստեր հետ։ Հեթերի թագավորը անձամբ ներկա գտնվեց ամուսնական արարողությանը։ Դա պատմականորեն հաստատված առաջին դիվանագիտական տեսակցությունն էր երկու խոշոր ու հզոր պետությունների միապետների միջև։